

պականաբնակ հերձուածոյն նեստորի<sup>1</sup> անիծելոյ, բռնահարեալ՝ զկամացն Աստուծոյ իբրեւ հանգիսի նահատակ, կոչեալ՝ քեզ ի թիկունս աւգնականութեան զմարմնացեալն ի մէնջ ճշմարիտ Աստուած Յիսուս Քրիստոս՝ առաջնորդ<sup>2</sup> ունելով զՀայր Արարիչ եւ անեղ անքնին<sup>3</sup> յարարածոց, որպէսզի Հոգւովն<sup>4</sup> Սրբով, որ է ուղեկից<sup>5</sup>, սկզբնեալ Ընթերցուածոց մեկնումն արարեալ բանաստեղծեսցես, որպէսզի թարգմանեսցես զամենայն կարգ ընթերցարանիս մերոյ, մանաւանդ զխորհրդածութեան ընթերցուածսն չորից յարմարմանցն, որ զանց առնէ զՊատեքին եւ սկզբնեալ Առաջաւորան հան-

դերձ: Իսկ դու ինքնին աշխատելով մատենագրեսցես, եւ ի լուր ականջաց բերելով տգիտաց ծանուցես զայս իր խորհրդոյ, որ զանազանեալ աստուածասքանչ խորհուրդ Տեառն բարձրելոյ:

Եւ ընդ միոյ սակաւուդ վարձս ընկալցիս յԱստուծոյ մերմէ՝ բիրապատիկ հազարաւորեալ, բիրաբաշխ եւ մշտալցոյց: Եւ յանգրաւ ուրախութիւնսն<sup>6</sup> երախտաւորեալ, ծաղկաւէտ շահաւորեալ, փառաւք վայելելով<sup>7</sup> բերկրեսչի՛ր ի Քրիստոս Յիսուս<sup>8</sup>, յահեղ փառաց Յայտնութեան նորա, որում<sup>9</sup> փառք յաւիտեանս. ամէ՛ն:

1 m Նեստորի

2 i յատաջնորդ

3 ai աճքճճիճ փիս աճքճիճ (i<sub>1</sub>m)

4 i<sub>1</sub> Հոգովն

5 ai ուղեկից, i<sub>1</sub>m ուղեկից փիս ուղեկից (վերակաճգճումը՝ Հ. Ն. Պողարեանի)

6 a ուրախութեան փիս ուրախութիւնսն (ii<sub>1</sub>m)

7 m վայելով փիս վայելելով (aii<sub>1</sub>)

8 m Քրիստոս փիս Յիսուս (aii<sub>1</sub>) (կրկն.)

9 m յորում փիս որում (aii<sub>1</sub>)